

**ՄԻՄԻՈՆԵՐՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԾԱԿԱԼԱԾ
ԼՈՒՍԱԿՈՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՐԻԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹՈՒՐԳԻԱՅԻ ՀԱՅԱՇԱՏ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ (1850-1920 թթ.)**

ԺԹ. դարի երկրորդ կէսի եւ ի. դարի առաջին երկու տասնամեակների արեւմտահայ դպրոցի եւ մանկավարժական մրտափ ընդհանուր համայնապատկերը ներկայացնող ուսումնասիրութիւնները կը լինեն թերի, եթէ անտես առնուի արեւմտեան միսիոներների ծաւալած լուսաւորական-կրթական գործունէութիւնը Կոստանդնուպոլսում, Արեւմտեան Հայաստանում, Թուրքիայի հայաշատ բնակավայրերում եւ այլուր:

Իրենց ուսումնասիրութիւններում այս հարցին տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով եւ տարակարծիք մեկնաբանութիւններով անդրադարձել են Մ. Օրմանեանը¹, Ա. Երիցեանը², Ե. Քասունին³, Ա. Ալպոյաճեանը⁴, Հ. Սուաճեանը⁵, Մ. Նալբանդեանը⁶, Ա. Զօպանեանը, Մ. Ճիզմեճեանը⁸, Լէոն⁹, Մ. Գասպարեանը¹⁰, Լ. Զորմիսեանը¹¹, Գր. Նազիկեանը¹² եւ ուրիշներ:

¹ Մ. ՕՐՄԱՆԵԱՆ, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, Կ. Պոլիս, 1911:

² Ա. ԵՐԻՑԵԱՆ, Տաեկաստանի հայոց իրաւունքներն ու նոցա Սահմանադրութիւնը, «Փորձ», Տփղիս, 1876, -1, էջ 378, -2, էջ 177:

³ Ե. ՔԱՍՈՒՆԻ, Լուսաշաւիղ պատմութեան հայ աւետարանական շարժման, 1846-1946, Բէյրութ, Լիբանան, 1947, էջ Ժ-ԺԱ, Գ:

⁴ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ, Պատմութիւն հայ դպրոցի, Հ. Ա. Գաճիկէ, 1937, էջ 568, նոյնի՝ Պատմութիւն եղեկիայ հայոց, Կաճիկէ, 1947, էջ 833, 853, 897 եւ այլն:

⁵ Հ. ՍՈՒԱՃԵԱՆ, Հրապարակախօսութիւն (կազմեց, խմբագրեց եւ առաջաբանը գրեց Սահակ Բաղեան), Երեւան, 1960, էջ 155, 1953, էջ 399, 400, 547, 550:

⁶ Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Ընտիր երկեր, Երեւան, 1953, էջ 399, 400, 547, 550:

Հարցի կարեւորութիւնը նշանաւորուում է այն առումով, որ գաւառների կիսաքանդ, թշուառ, աղքատ ու ողորմելի դպրոցների կողքին օրէջօր աւելանում էին եւրոպական միախոնէր-քարոզիչների բարեկարգ ու շքեղ դպրոցները, որտեղ յաճախում էին նաեւ բաւական մեծ թուով հայ մանուկներ՝ ստանալով օտար կրթութիւն եւ դաստիարակութիւն: Եւրոպական միախոնէրները վարում էին մարդու հոգին ու միտքը որսալու քաղաքականութիւն եւ, սնդուրուած բարեգործ-լուսաւորչի քօղի տակ, հետապնդում էին քաղաքական որոշակի նպատակներ եւ քայլ առ քայլ մեծացնում էին իրենց գործունէութեան շրջանակները:

Իբրեւ գաւառաբանական, քաղաքական ծրագրային գաղափարների իրագործման կենտրոն՝ նրանք ընտրել էին Կոստանդնուպոլիսը, քանի որ այստեղ էր գտնւում արեւմտահայ մտքի ընտրանին: Օգտագործելով ժողովրդի սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը՝ նրանք Կ. Պոլսում, Արեւմտեան Հայաստանի գաւառներում, Թուրքիայի հայաշատ կենտրոններում հիմնում էին իրենց յարմարաւէտ ու բարեկարգ դպրոցները: Հրահրելով դաւանաբանական վէճեր՝ արդէն նրանց յաջողուել էր պառակտել արեւմտահայ կաթողիկ ու բողոքական համայնքները եւ փտանգել նրանց հետագայ միասնութիւնը:

1834 թուականին միախոնէրները Կ. Պոլսի Բերա թաղամասում հիմնեցին իրենց առաջին դպրոցը՝ օրիորդաց յատուկ բաժանմունքով⁷: Նրանք հայ բնակչութեանը, կղերականներին ու մըշակոյթի գործիչներին գայթակղիչ խոստումներով հրապուրում

⁷ Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, «Անահիտ», Փարիզ, 1905, թիւ 2, էջ 41-43:

⁸ Մ. ՃԻՉՄԵՃԵԱՆ, Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնո, Կալիֆորնիա, 1955, էջ 109:

⁹ Լ.ԷՈ, Հայոց պատմութեան նորագոյն շրջան, մասն 2, Երեւան, 1927, էջ 297-298 (ձեռագրի իրաւունքով):

¹⁰ Մ. ԳԱՍՊԱՐԵԱՆ, Հայերը Նիկոմիդիա գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ 133-134, 141:

¹¹ Լ. ՉՈՐՄԻՍԵԱՆ, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա հատոր, (1850-1857), Պէյրութ, 1972, էջ 497-519:

¹² ԳՐ. ՆԱԶԻԿԵԱՆ, Արեւմտահայ մանկավարժական միութն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից մինչեւ 19-րդ դարի 50-60-ական թուականները), Երեւան, 1969, էջ 158-180:

¹³ Գ. ՆԱԶԻԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 162:

էին բարենորոգել հայ եկեղեցին, դպրոցները եւ տարածել լուսաւորութիւն:

ԺԹ. դարի սկզբներին արեւմտահայերը ղեռնու հունէին գիշերօթիկ դպրոցներ, որտեղ կազմակերպուէր եւ իրականացուէր որր եւ անապաստան երեխաների դաստիարակութեան ու կրթութեան գործը: Այս հանգամանքը չէր վրիպել եւրոպական միախոնքների տեսադաշտից: Օգտագործելով առիթը՝ նրանք փութաջանօրէն հիմնեցին գիշերօթիկ դպրոցներ եւ ձեռնամուխ եղան հայ պատանիներին ու աղջիկներին իրենց ոգով դաստիարակելու եւ կրթելու գործին:

Միանգամայն հասկանալի է, որ թուրքական կառավարութիւններին շատ ձեռնտու էր միախոնքներին եւ դրսի միջամտութեամբ հայերի մէջ ծագած կրօնական ու դաւանաբանական իրարամերժ վէճերն ու անպտուղ պայքարը, քանի որ այս ճանապարհով հնարաւոր էր դառնում մի կողմից սիրաշահել մեծ տէրութիւններին, իսկ միւս կողմից՝ հայ առաջադէմ միտքը շեղել հասարակական-քաղաքական եւ ազգային-ազատագրական պայքարից: Այդ մասին Եղիշէ Մելիքեանն ունի հետաքրքիր գիտարկում. «Թուրք բռնակալութիւնը՝ եւս նպատաւոր հող ստեղծած էր բողոքականութեան համար, Սուլթան Համիտի գահակալութեան օրով (1876-1909 թթ.) Հայ բողոքականները սկսած էին Հայ անունը իրենց վրայէն տեսակ մը վերցնել, անոր տեղ զգենալով «Վրօթէսքան միլլէթ»-ի անունը, իսկ եթէ կային բողոքականներ, որ այս չքսեմք ուրացումին, ուժացումին չէին հանդուրժէր, անոնք առաւելապէս կու գային Հայ յեղափոխականներու հետեւողներէն»¹⁴:

Այսպիսով՝ ԺԹ. դարի երկրորդ կէսին հայ իրականութեան մէջ բազմաթիւ չլուծուած խնդիրների կողքին աւելանում էր նաեւ հայ մանուկների՝ ոչ հայկական վարժարաններում ուսանելու խնդիրը, որը, ըստ էութեան, իրենից ներկայացնում էր ոչ պակաս վտանգաւորութիւն ազգային միասնութեան պառակտման, ազգային դիմագիծը եւ ինքնութիւնը կորցնելու համար: Այն միտումը, որ ծնողները ինչ-ինչ հանգամանքներից զրդուած նախապատուութիւնը տալիս էին օտար ուսուցմանը եւ այն գերադասում էին հայկականից, ակնյայտ երեւում էր: «Լիակատար

¹⁴ ԵՂԻՇԷ Յ. ՄԵԼԻՔԵԱՆ, Վիճակագիր Խնուս (Հարք) գաւառի եւ քոնդրակցոց աղանդին եւ բողոքականութեան կապը ի Խնուս, *Նիւ Եորք, 1943*, էջ 30-31:

համոզմունքով կարելի է ասել,- գրում է Ա. Կոլլերակիրը,- որ ծայրայեղ կարիքն է հարկադրում հայերին իրենց երեխաներին ամերիկեան դպրոցներ տալու»¹⁵: Հայ առաջադէմ մտաւորականները լայն քննարկման նիւթ էին դարձրել այս իրողութիւնը՝ այդ նպատակով օգտագործելով ժամանակի մամուլը եւ հրապարակագրութիւնը, անսքող զայրոյթով նրանք դատապարտում էին ազգային կեանքում օրըստօրէ արմատաւորուող այս վտանգալարոյց երեւոյթը եւ այն ներկայացնում հանրութեան դատին: Իրեն յատուկ անաչառութեամբ իր պարտաւանքի եւ արդարացի բողոքի խօսքն ուղղելով ամերիկեան միսիոներներին՝ Հ. Սվաճեանը յայտարարում է. «Հայ ազգը քէւն այսօր խեղճ ու հարստահարեալ, անտէր ու անթիկունք, բայց վատութիւն կը համարի այսպիսի միսթիկական եւ ինքնահաւան օգնողաց կամ քարեկարգչաց առջեւ իր ազատ գլուխը խոնարհելու եւ պատառ մը հացի համար ալ իր խիղճն ու ազատ բանակացութիւնը վաճառելու»¹⁶: Հայ առաջադէմ մտածողները քննարկելէն խնայում դիմագերծելու արեւմտեան միսիոներներին «խաբէական նպատակով» պառակտիչ գործունէութիւնը՝ կեանքի կոչելով հայ ժողովրդի դարաւոր մշակոյթն ու կրթական աւանդոյթները¹⁷: Ամէն մի ժողովուրդ ունի իր ապրելու իւրակերպութիւնը, հետեւաբար՝ պէտք է կրթել այնպիսի սերունդ, որը սիրի հայ կեանքն ու աւանդոյթը, իր եկեղեցին ու բարքերը: Միայն այս կերպ հնարաւոր կը լինի պահպանել հայի էթնիկ նկարագիրը:

Եւրոպական երկրների եւ Միացեալ Նահանգների կրօնական եւ կրթական տարրեր կազմակերպութիւններ Օսմանեան կայսրութեան խոշոր քաղաքներում հիմնել էին օտար վարժարաններ¹⁸, որոնք պահւում էին այդ երկրների պետական միջոց-

¹⁵ А. Коллюбакин. Деятельность протестантских миссий в северо-восточной части Азиатской Турции, изд. Кавк. отд. РГО, 1885, с. 112.

¹⁶ «Մեղու», Կ. Պոլիս, 1862, թիւ 30:

¹⁷ Տե՛ս ԼէՆ, Հայոց պատմութիւն, նորագոյն շրջան, մասն 2, Երեւան, 1927, էջ 297-298 (ձեռագրի իրաւունքով):

¹⁸ Օտար վարժարանները Օսմանեան կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող այն կրթական հաստատութիւններն էին, որոնց կրթական, տնտեսական եւ կազմակերպչական կառավարման մէջ հայ եկեղեցին եւ հայկական այլ կառույցներ որեւէ մասնակցութիւն չեն ունեցել: Սակայն օտար վարժարաններում

ների հաշուին՝ ստանալով նաեւ բարոյական աջակցութիւն եւ խրախուսում: Օտար վարժարանները հետապնդել են որոշակի անտեսական, քաղաքական ու կրօնական քարոզչութեան նպատակներ: Առաջին հայեացքից նրանց գործունէութիւնը թւում էր անշահախնդիր եւ զուտ մարդասիրական նպատակներ հետապնդող: Բայց իրականում իրենց երկրի մշակոյթը եւ դաւանանքը տարածելու, ճանապարհով նրանք աշխատել են հնարաւորին չափ ստեղծել աջակիցների եւ համակիրների լայն ասպարէզ՝ իրենց յայտնի եւ գաղտնի ծրագրերն իրագործելու համար: Ի դէպ, հայ համայնքի համար օտար վարժարաններ էին նաեւ Օսմանեան կայսրութեան պետական վարժարանները: Հետաքրքիր է այն փաստը, որ թուրքական նախակրթարաններ (սիրեան եւ ռիւշտիէ) յաճախող հայ մանուկների թիւը հասել էր նուազագոյնի, մինչդեռ նոյնը չի կարելի ասել թուրքական միջնակարգ (իզադիէ) դպրոցների մասին¹⁹: Այստեղ հիմնականում սովորում էին այն հայ պատանիները, ովքեր հետագայում իրենց կրթութիւնը պէտք է շարունակէին օսմանեան պետական բարձրագոյն դպրոցներում: Յաւօք, մեր ձեռքի տակ չկան համապատասխան վիճակագրութիւններ այդ վարժարաններում սովորող հայ պատանիների թիւի, ուսման մէջ նրանց ունեցած առաջադիմութեան վերաբերեալ, չկան ստոյգ տեղեկութիւններ պետական միջնակարգ դպրոցների կրթական համակարգի, թուրք ուսուցիչների մասնագիտական պատրաստութեան, քրիստոնեայ ուսանողների հանդէպ նրանց ունեցած վերաբերմունքի, դպրոցների ներքին կեանքի եւ բարոյահոգեբանական մթնոլորտի եւ այս կարգի այլ իրողութիւնների մասին: Այս ամէնով հանդերձ՝ հանրայայտ ճշմարտութիւն է, որ մինչեւ ԺԹ՝ դարը եւ դրանից յետոյ ընկած ժամանակաշրջանում, թուրքիայում դպրոցական եւ կրթական գործը մղուած էր յետին պլան: Միայն ԺԹ՝ դարի առաջին տասնամեակներին երեւան եկան մզկիթներին կից առաջին նախակրթարանները՝ մետրեսէները, որտեղ մահմեդական հոգեւորականները (հոճաներ) երեխաներին սովորեցնում էին Ղուրանից բանաւոր հատուածներ եւ գրաճանաչութիւն: Աւելին՝ նախակրթարանների չրջանաւարտներն իրենց աղքատիկ գիտելիքներով տարիներ շարունակ համալրում էին պետական բարձր պաշտօնեաների եւ հոգեւորականութեան շարքերը: Աւելի ուշ՝ սուլթան

հայերը հանդէս են եկել իրրեւ ուսուցիչ, պաշտօնեայ, մատակարար եւ այլ տիպի ծառայութիւններ կատարող:

19 Տե՛ս «Ծաղիկ», 4, Պոլիս, 1892, թիւ 52, էջ 603-604:

Մահմուդի եւ սուլթան Մէջիտի օրօք, հիմնուեցին քիչ թէ շատ կանոնաւոր դպրոցներ եւ մասնագիտական վարժարաններ (իրաւաբանական, բժշկական, գինուորական, դեղագործական, առեւտրական եւ այլն)²⁰ :

Թուրքիայում ԺԹ. դարի երկրորդ կէսին նշանաւոր կրթական հաստատութիւններից մէկը Կալաթա-Սերայի լիցէյն էր (սուլթանիէ), որը հիմնադրուել է Կ. Պոլսում՝ 1868 թուականին Փրանսիական միսիոներների կողմից: Այն գործել է Փրանսիական լիցէյնի կրթական ծրագրով: Այստեղ տնօրէնը եւ ուսուցիչները հիմնականում Փրանսիացիներ էին: ԺԹ. դարի երկրորդ կէսի քաղաքական ու պետական թուրք գործիչները մեծ մասամբ Կալաթա-Սերայի լիցէյնի շրջանաւարտներ էին:

ԺԹ. դարի վերջերին Կալաթա-Սերայի վարժարանում սովորողների թիւը հասնում էր 550-ի, որի գերակշիռ մասը հայ պատանիներ էին²¹: Վարժարանի նշանաւոր շրջանաւարտներից են մաթեմատիկոս Գէորգ Ասատրեանը, նոր դպրոցի գաղափարախօս Սմբատ Դաւթեանը, ճարտարագէտ Երուանդ Աղաթոնը, անուանի բժիշկ Յակոբ Եւմանեանը եւ շատ ուրիշներ: Կալաթա-Սերայի լիցէյնի գլխաւոր նպատակը Փրանսիական միսիոներների ազդեցութեան ոլորտի ընդլայման միտումն էր արեւելեան երկրներում²²:

Փրանսիական վարժարաններում ուսուցումը տարւում էր ֆրանսերէնով, իսկ օսմաներէնը, յունարէնը, եբրայերէնը, հայերէնը եւ միւս լեզուները համարւում էին օտար լեզուներ, դասաւանդւում էին ըստ նախասիրութեան՝ շաբաթական 2 ժամով:

Թէպէտ պետութեան կողմից պաշտօնապէս արգելուած էր կրօնի մասնաւոր քարոզչութիւնը, բայց եւ այնպէս, ուսուցչական մարմնի կողմից, որի մեծ մասը հոգեւորականներ էին, անուղղակի ձեւով քարոզւում էր կաթոլիկ դաւանանքը:

²⁰ Տե՛ս Լ. ՉՈՐՄԻՍԵԱՆ, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա հատոր, 1850-1878, Պէյրուք, 1972, էջ 502, նաեւ Գ. Ա. ՆԱԶԻԿԵԱՆ, Արեւմտահայ մակկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի 50-60-ական թուականներ), Երեւան, 1969, էջ 23-24:

²¹ Տե՛ս «Մաղիկ», Կ. Պոլիս, 1892, թիւ 52, էջ 603-604:

²² А. Д. Желиков, Ю. А. Петросян, История просвещения в Турции, М., 1965, с. 50.

Ֆրանսիական վարժարանի ղուները բաց էին բոլորի առջև։ Աշակերտակազմը խառն էր, բազմազգ, որն էլ վարժարանի նպատակի իրագործման հիմնական կէտն էր, մինչդեռ գաւառական քաղաքներում նմանատիպ վարժարաններում սովորողների գերակշիռ կազմը հայ երեխաներ էին։

Այսպիսի նպատակաուղղութիւն ունէին նաեւ ամերիկեան միսիոներների հիմնած դպրոցները։ Հէնց այդ պատճառով էլ արեւմտեան միսիոներների գործունէութիւնը գլխաւորապէս կենտրոնացուած էր Կ. Պոլսում եւ կայսրութեան միւս խոշոր քաղաքներում, որտեղ նրանց հիմնած երկսեռ վարժարաններում սովորում էին տարբեր ազգութիւնների հարիւրաւոր երեխաներ։

Քաղաքի հարուստներն իրենց երեխաներին սիրով տալիս էին Ֆրանսիական կրթութեան, որն առաջին հերթին արդարացում էր ինչպէս գործնական նկատառումով, այնպէս էլ Ֆրանսիական մշակոյթի՝ իրեւ համաշխարհային քաղաքակրթութեան իրողութեան տեսակէտից։

Ֆրանսիական քաղաքակրթութիւնն արեւելքի ժողովուրդների համար մշակոյթների երկխօսութեան անհրաժեշտ միջոց էր։ Այս դէպքում Ֆրանսերէնը ոչ միայն մշակութային, այլեւ պետութիւնների միջազգային յարաբերութիւնների պաշտօնական լեզու էր, քանի որ բոլոր խոշոր դրամատները, տարբեր ընկերութիւններն ու կազմակերպութիւններն իրենց վարչական թղթակցութիւնները, զրազրութիւններն ու տարաբնոյթ գործակցութիւնները կատարում էին Ֆրանսերէնով։

Այս առումով անչափ մեծ է եղել նաեւ Ֆրանսիական մշակոյթի դերակատարութիւնը արեւմտահայ կեանքում՝ քաղաքականութեան, տնտեսագիտութեան, բժշկութեան, գրականութեան, լրագրութեան, մանկավարժութեան եւ այլ ասպարէզներում։ Ինչպէս պետական կառույցներում, այնպէս էլ կրթութեան ոլորտում բարձր պահանջարկ ունէին Ֆրանսերէն լաւ իմացող մարդիկ։ Հետաքրքիրն այն է, որ արեւմտահայ մտաւորականութեան մէջ գրեթէ բացառութիւն էին կազմում նրանք, ովքեր անժանօթ էին Ֆրանսերէնին։ Սակայն դա չի նշանակում, որ հայ երեխաները Ֆրանսերէնի իրենց իմացութիւնը ձեռք են բերել միայն Ֆրանսիական վարժարաններում։

Արեւմտահայ նշանաւոր դպրոցները, յատկապէս մասնաւոր վարժարանները գործել են Ֆրանսիական դպրոցների կրթական ծրագրերով, որտեղ պետական (օսմաներէն) եւ մայրենի լեզուի հետ

հաւասարապէս շարժական նոյն ժամաքանակով ուսուցանուել է նաեւ ֆրանսերէնը: Արեւմտահայ վարժարաններում օսմաներէնից յետոյ երկրորդ օտար լեզուն ֆրանսերէնն էր, յետոյ միայն անգլերէնը, իտալերէնը, իսկ աւելի ուշ՝ նաեւ գերմաներէնը:

Քանի որ ֆրանսիական կաթոլիկ միսիոներներն իրենց ծրարագրերի յաջող իրականացման կենտրոն ընտրել էին Կ. Պոլիսն ու կայսերապետութեան միւս խոշոր քաղաքները, ապա հայկական նահանգներում կաթոլիկ օտար վարժարաններն ընդհանրապէս աննշան թիւ են կազմել: Այսպէս՝ Կարնոյ մէջ գործել է Կարուչինեան իգական վարժարանը՝ 80 աշակերտուհիներով ու մայրապետներով: Նրանք հիմնել են նաեւ մէկ այլ իգական վարժարան, որտեղ հայ ընտանիքներից յաճախել են 150 աղջիկներ²³:

Այս վարժարանները գործել են կաթոլիկ միաբանութեան տնօրինութեան ներքոյ: Ֆրանսիական կաթոլիկ միաբանութիւնը Կարինում հիմնեց Ս. Աստուածածին եկեղեցին եւ դրան կից բացեց դպրոց, որտեղ յաճախել են 200-ից աւելի լուսաւորչական հայ ընտանիքի երեխաներ:

Դոմինիկեան երկու հայագգի կաթոլիկներ (ժակ Ռեթորէն եւ Դիւրլանը) Վանում հիմնել են եկեղեցի ու վարժարան, իսկ 1894-1896 թուականների կոտորածներից յետոյ նաեւ որբանոց՝ 30-40 որբ երեխաների համար:

Կաթոլիկութեան տարածման հզօր կենտրոն է եղել Պարբերդը: 1867 թուականին ֆրանսիացի կաթոլիկ միսիոներների ջանքերով այստեղ կառուցուեց եկեղեցի եւ միսիոներների համար ընակատեղի: Շուտով նրանց գործունէութեան կենտրոնը Ուրֆայից տեղափոխուեց Մեզրէ, որտեղ նրանք փութաջանօրէն կառուցեցին եկեղեցի եւ դպրոց: Աւելի ուշ հիմնուեց Մեզրէի ֆրանսիական հոշակաւոր քոլէջը, որի ղեկավարութիւնը վստահուեց ֆրանսիացի կաթոլիկ միաբաններին, իսկ տնօրինութիւնը՝ Պիեր Ռաֆայէլին:

Հայագիտական առարկաների դասաւանդման դրուածքը քոլէջում բարելաւելու նպատակով տնօրինութիւնը դասախօսական աշխատանքի հրաւիրեց Թլկատինցուն (Յովհաննէս Յարութիւ-

²³ 1867 թ. ֆրանսիացի կաթոլիկներն այստեղ բացել են «Լազարիսթ» տղաների վարժարանը, որի տնօրինութիւնը հետագայում ամբողջովին անցել է ֆրանսիական կաթոլիկների իրաւասութեան ներքոյ:

նեան): Նոյն նպատակով խարրերդի դպրոցի համար հրաւիրուեց Ռուբէն Զարդարեանը²⁴:

Մեզրէի Փրանսիական քոլէջն ունէր հօր ուսուցչական մարմին: Այդ կազմում ընդգրկուել էին ժամանակի նշանաւոր ուսուցիչ-մտաւորականները, որոնց մէջ իրենց բարձր պատրաստ-ուածութեամբ եւ հայագիտութեամբ աչքի էին ընկնում բնագէտ-մաթեմատիկոս Պիեր Մարկը եւ Ֆրեիթ Ֆերդինանդը: Աշակերտ-ների թիւը քոլէջում հասնում էր 350-ի, իսկ դրանց մեծ մասը հայ երեխաներ էին: Տեսական գիտելիքներից բացի, երեխաները ստանում էին նաեւ աշխատանքային դաստիարակութիւն. տղա-ները խորանում էին տարրեր արհեստների մէջ, իսկ աղջիկները սովորում էին ձեռագործ, ասեղնագործութիւն, ձեւագիտութիւն, կար ու ձեւ²⁵:

Փրանսիական վարժարանների ընթացաւարտներից շատերն իրենց կրթութիւնը շարունակել են բարձրագոյն կրթօջախնե-րում՝ մասնագիտանալով բժշկութեան, դեղագործութեան, իրա-ւագիտութեան, ճարտարագիտութեան, մանկավարժութեան եւ այլ մասնագիտութիւնների մէջ: 1902 թուականին Փրանսիական կառավարութեան նախաձեռնութեամբ Մեզրէում կառուցուեց եռալայրկ յարմարաւէտ վարժարան՝ ցերեկային եւ գիշերօթիկ բաժանմունքներով, որտեղ սովորում էր Հայաստանի տարրեր գաւառներից եկած 30 երեխայ:

Օտար կաթոլիկ վարժարաններ են հիմնուել նաեւ Մալա-թիայում եւ հայկական այլ քաղաքներում ու գաւառներում: Միսիոներների տեսագաշտից չէր վրիպել նաեւ Կիլիկիան: ԺԹ. դարի 80-ական թուականներին Այնթապում Փրանկիսկեանները²⁶ հիմնեցին վարժարան, որտեղ սովորում էր 200 երեխայ: Բացի դրանից, նրանք 1886 թուականին Այնթապում հիմնեցին իդական, իսկ Քեսապում արական դպրոց, որտեղ սովորել է 100-ից աւել երեխայ:

Կաթոլիկութեան տարածման խոշոր կենտրոն է եղել նաեւ Մարաշը: Այստեղ Փրանկիսկեան կաթոլիկները հաստատուել էին

²⁴ Լ. ԶՈՐՄԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 506:

²⁵ Նոյն տեղում:

²⁶ Փրանկիսկեան, Յիսուսեան, Դոմինիկեան՝ ուշ միջնադարում ստեղծուած կաթոլիկական կուսակրօն միաբանութիւններ են, որոնք ծառայել են միաիւ-ներական լայն գործունէութիւն:

դեռեւս ժ.թ. դարի 60-ական թուականներին: Նրանց եռանդագին ջանքերով կաթոլիկ եկեղեցիներ ու դպրոցներ հիմնադրուեցին Այնթապում, Քեսապում, Բաղէշում, Դէֆնկելում, Հասան-Բեյլիում, Անտիոքում, Ենիճէ Գալէում եւ այլուր:

Աւելի ուշ նրանք եկեղեցիներ, մայրապետարաններ, ժողովարաններ ու դպրոցներ են հիմնադրել նաեւ Թոգաթում (Եւդոկիա), Զմիւռնիայում, Բրուսայում, Տրապիզոնում, Նիկոմիդիայում, Պարտիզակում եւ հայաշատ այլ քաղաքներում:

Ամերիկեան միսիոներների հսկողութեամբ բողոքականները կարինում նոյնպէս բացել են երկսեռ վարժարաններ²⁷: Կարինում եւ հայկական միւս նահանգներում բողոքականութեան գործունէութիւնը հիմնականում ծաւալուել է 1894-1896 թուականների հայկական զանգուածային ջարդերից յետոյ: Բողոքական միսիոներները կարինում կառուցել են հիւանդանոց, բացել են դպրոց-ապաստարաններ, որտեղ ընդգրկուել են 150-ից աւել հայ մանուկներ:

1914-ին վերոնշեալ վայրերում գործում էր 174 միսիոներ, որոնց օգնում էին աւելի քանի 1200 տեղացի հայեր, բացուել էր 137 եկեղեցի: Գործում էր աւելի քան 400 ամերիկեան վարժարան, այդ թւում՝ 8 քոլէջ, 3 ճեմարան, 46 միջնակարգ դպրոց²⁸:

«Հայրենիք»-ի համարներից մէկում Պարտիզակի բողոքականների կրօնակրթական գործունէութեան վերաբերեալ կայ այսպիսի հաղորդագրութիւն. «Բողոքականք հոս կը գտնուին գրեթէ 72-75 տան չափ, ունին քաւական մեծկակ ժողովարան մը, ուր գրեթէ ամէն կիրակի խումն բազմութիւն մը կը յաճախէ Տիրոջը խօսքը լսելու համար: Ամերիկեան Պորտ ընկերութիւնը հաստատած է գիշերօթիկ քարճագոյն վարժարան մը որ կը պարունակէ 120-130-ի չափ աշակերտներ, որոնց 90-ը գիշերօթիկ են, որոնց մեծամասնութիւնը կը կազմեն մերայինք, ունին 5 վարժապետ: Այս դպրոցը քաւական մեծ ծառայութիւն մը մատուցած է պարտիզակցիներուն, նմանապէս շատ մը ընթացաւարտ տուած է որոնք գաւառներում ուսուցչութեան պաշտօնով կը պարտին, այս տարի եւս 8 ընթացաւարտ պիտի ունե-

²⁷ Լ. ԶՈՐՄԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 499:

²⁸ Հայկական հարց, Հանրագիտարան, Ե., 1996, էջ 30:

նայ: Չմոռնամ ըսել թէ բողոքականք մօտ օրերս մանկապարտեզ մը պիտի հաստատեն»²⁹:

Նոյն թերթը տեղեկացնում է նաեւ Պարտիզակի կաթնիկների դաւանարանական-լուսաւորական գործունէութեան մասին, մասնաւորապէս նշելով, որ միաբանութիւնը թէպէտ ունէր նորակառոյց ժողովարաններ, եկեղեցիներ ու մայրապետարաններ, յարմարաւէտ քարուկիր վարժարաններ, սակայն բողոքականներէ հետ համեմատած ունեցել են աւելի քիչ թուով համակիր-համախոհներ. «... գրեթէ 15 տուն, ունին 2 վարդապետ եւ 4 մայրապետ, նաեւ դպրոց մը ուր կը յաճախեն 60-ի չափ տղայ»³⁰: «Հայրենիք»-ի բերած փաստերը վկայում են, որ Պարտիզակում բողոքականները, իսկապէս, ծաւալել են կրօնական եւ լուսաւորական լայն գործունէութիւն:

Արեւմուտքի բողոքականներից անկախ հայ բողոքական համայնքները Հայաստանի տարրեր բնակավայրերում ստեղծել են իրենց ժողովարանները եւ դրանց կից բացել են նաեւ դպրոցներ:

Ինչպէս կաթնիկ, այնպէս էլ բողոքական վարժարանները կրթական նպատակներից բացի ունեցել են նաեւ հեռահար նպատակներ՝ ամուր երաշխիքներ ստեղծել բողոքականութեան հետագայ զարգացման համար եւ հայ բողոքական համայնքը մշտապէս հարստացնել նորանոր ուժերով:

Հայ բողոքական վարժարաններն իրենց վրայ ուղղակիօրէն կրել են ամերիկեան դպրոցի հիմնական ուղղութիւնների ազդեցութիւնները: Այստեղ մայրենիից յետոյ պարտադիր լեզու համարուել է անգլերէնը:

Հայաստանում բողոքականութեան տարածման հզօր կենտրոններ են եղել Կիլիկիան, Խարբերդը, մասամբ նաեւ Խնուսը³¹:

²⁹ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1894, 12 յուլիս, թիւ 870:

³⁰ Նոյն տեղում:

³¹ Խնուսը՝ պատմական Հարքը, Հին Հայաստանի Տափ-Տուրուբերան նահանգի ամենահին գաւառներից է, որի մասին Ղ. Ալիշանը գրում է. «Խնուս եղած է նաեւ նախահայուն օրրանը, երբ է մեր դիցազնահայր Հայկ Նահապետը հիմնած իր առաջին նահանգը «Հարք» (տե՛ս ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, Քաղաքական Աշխարհագրութիւն, քաղաքական նկարագիր հայոց մեծաց, Վենետիկ, 1853թ., էջ 23):

ԺԹ. դարի 70-ական թուականներին խարբերդի չըջակայքում՝ Խոյլի, Հիւսէյնիկ, Խուլագիւղ, Չնքուշ, Հողէ, Բաղանչի եւ այլ գիւղերում հիմնադրուել են 20-ից անէլ ժողովարաններ, որոնց կից բացուել են նաեւ դպրոցներ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ժողովարան-դպրոցների թիւը հասել է 45-ի³²: Բողոքականները, սովորական դպրոցներից բացի, տարբեր վայրերում բացել են նաեւ կիրակնօրեայ դպրոցներ, որոնց առաջնահերթ նպատակը մեծահասակների շրջանում լուսաւորութիւն տարածելն էր: Խարբերդում՝ իրրեւ բողոքականութեան կենտրոն, հաւաքուել էր հայ մտքի ընտրանին, որը նշանակալի հետք է թողել դպրոցի եւ մշակոյթի պատմութեան զարգացման մէջ: Նրանցից շատերը, հայկական վարժարաններից բացի, փայլուն յաջողութեամբ դասախօսել են նաեւ ամերիկեան, ֆրանսիական եւ գերմանական վարժարաններում, պատրաստել են հայ երիտասարդ մտաւորականների փառահեղ սերունդ, որոնց, այդպէս էլ վիճակուած չէր իրականացնել գիտութիւնը ժողովրդին ծառայեցնելու իրենց ազգանպաստ ծրագրերը, քանի որ նրանց մեծ մասը նահատակուեց 1915 թուականին՝ ցեղասպանութեան դժընդակ օրերին: Նրանցից յիշատակենք մի քանիսին՝ Մ. Շմաւոնեան, Տ. Լիւլէճեան, Ն. Թենեքեճեան, Խ. Նահիկեան, Կ. Սողիկեան, Հ. Պուճիզանեան, Մ. Որբերեան, Գ. Պէշկիլթուրեան Հ. Կարապետեան, Խ. Պեննէյեան, Ս. Խաչատուրեան, Պ. Ամիրխանեան, Մ. Ժամկոչեան եւ բազմաթիւ այլ շնորհաշատ երիտասարդներ, ովքեր քաջ տիրապետում էին օտար լեզուների, համայնագէտ էին գիտութիւնների եւ արուեստների բնագաւառում, ովքեր ունէին բազում լուսաւոր գաղափարներ եւ երազում էին իրենց Հայաստան Աշխարհը տեսնել չէն ու բարգաւաճ³³:

ԺԹ. դարի 70-ական թուականներին Վան եւ գալիս Բարնըմը եւ Ռեյնոլդսը եւ Վասպուրականում բողոքական շարժման սկիզբ դնում: Այստեղ նրանք հիմնում են ժողովարան եւ դպրոց: Ռեյնոլդսը գիշուորական բժիշկ էր եւ չորս տասնամեակ Վասպուրականում յայտնի էր նաեւ իրրեւ միսիոներ: Այդ տարիներին Այգեաստանի հարաւարեւելեան մասում նա հիմնադրեց իր կենտրոնը. Վարապայ լեռան ստորոտում կառուեց դպրոց, ժողովարան, հիւանդանոց, միսիոներների համար բնակատեղի, դեղատուն, արհեստանոց, գերեզմանատուն, մշակեց նաեւ բանջարանոց

³² Լ. ԶՈՐՄԻՍԵԱՆ, *նշ. աշխ.*, էջ 498:

³³ Տե՛ս նոյն տեղում:

ու ծաղկանոց: Նա անվերապա՝ հեղինակութիւն ունէր Պորտ Կեդրոնում եւ այնտեղից ստացած գումարները բարեխղճօրէն ու պարտաճանաչ բաժանում էր տեղի կարիքաւորներին: Չնայած նըրան, որ Վանի Ամերիկեան վարժարանում տարիների ընթացքում կրթուել ու դաստիարակուել են բազմաթիւ հայ մանուկներ, այնուամենայնիւ, Վասպուրականում բողոքականութիւնն այդպէս էլ նշանակալի գարգացում չի ունեցել: Դա է հաստատում նաեւ Համբարձում Երամեանի Ռեյնոլդսից անձամբ լսած հետեւեալ խոստովանութիւնը. «25-30 տարուան մէջ հազիւ 40 անդամ շահած եմ: Եթէ դադրի անոնց հացը եւ պաշտօնը հազիւ չորս հոգի մնան միայն անոնցմէ»³⁴:

Բիթլիսում ընդամէնը եղել է 100 բողոքական, իսկ ողջ նահանգում՝ Տարօնում՝ 1200: Ամերիկեան միսիոներներն այստեղ հիմնել են քոլէջ, ուր յաճախել է 130 աշակերտ, իսկ աղջիկների համար բացել են իգական վարժարան, ուր յաճախել է 80 աղջիկ:

Մուշում եւս բողոքականութիւնը սկիզբ առաւ ԺԹ. դարի կէսերին: Այստեղ 50-ական թուականներին հիմնադրուեցին ժողովարաններ ու դպրոցներ: 1894-1896 թուականների հայկական զանգուածային ջարդերից յետոյ բողոքականներն իրենց գործունէութիւնը ծառայեցին Կարինում, իսկ Դիարբեքիւրում բողոքականները կազմել են մի փոքր խումբ եւ դպրոցի ու կրթական շարժման մէջ կարելի էր ասել, էական դեր չեն ունեցել:

Ակնում բողոքականները հաստատուել են ԺԹ. դարի 80-ականներից սկսած, ունեցել են 70 բողոքական, հիմնել են ժողովարան-դպրոց: Իսկ Թոգաթում նրանք հաստատուել են դեռեւս 1854 թուականին, հիմնել են դպրոց, ուր յաճախել է ընդամէնը 50 երեխայ³⁵:

Ամերիկեան միսիոներները բողոքական վարժարաններ են բացել Խնուս-Բերդում, Հարամիկում, Զեւիւմէում, Խոզլիում, Ենիքէօյում, Բուռնազում: Քաղաքում բողոքականների թիւը եղել է խիստ սահմանափակ, նրանց մեծ մասը Բիթլիսից գաղ-

³⁴ Հ. ԵՐԱՄԵԱՆ, Յուշարձան Վան-Վասպուրական, հ. 1, Ալեքսանդրիա, 1929, էջ 296:

³⁵ Լ. ՉՈՐՄԻՍԵԱՆ, *նշ. աշխ.*, էջ 499, նաեւ՝ Գ. ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, էջ 251, 253, 280 եւ այլն:

Թած բողոքականներ էին, իսկ բուն բերդեցիները բողոքականութեան հետեւորդներ չեն ունեցել:

Հարամիկում բողոքականներն ունեցել են ընդամենը 25-30 տուն, իսկ սրանց մէջ միայն չորս ընտանիք է եղել բնիկ գիւղացի: 25.000-ից աւելի հայ բնակչութիւն ունեցող Խնուս-Բերդաքաղաքում բողոքականութեան հետեւել է ընդամենը 500-600 մարդ: Ինչպէս տեսնում ենք, այս թուերն այնքան էլ պերճախօս չեն, սակայն մի բան հաստատ է, որ Խնուսում բողոքականութեան շարժումը վերջնականապէս վերջ դրեց թողնողական աղանդին: Այդ մասին հաւաստում է նաեւ հետեւեալ վկայութիւնը. «Խնուսի մէջ բողոքականութեան մուտքով վերջ կը գրտնէ թողնողակեցոց աղանդը, աղանդաւորներու մնացորդները ըստ ամենայնի ձուլելով բողոքականութեան մէջ»³⁶:

Հարամիկ գիւղում առաջին բողոքականը Առաքել Յովհաննիսեանն էր: Ամերիկեան միսիոներների նիւթական օժանդակութեամբ նա հիմնեց ժողովարան-գաղտոց, որտեղ դասաւանդում էին բարձրագոյն կրթութիւն ստացած քարոզիչ-վարժապետներ Սիմոն Դաւթեանը, Պօղոս Քարահատեանը, քարոզիչ Յովհաննէս Բարաղամեանը, Գարեգին Զիթճեանը, Յովսէփ Պարոնեանը, Մատթէոս Հովիւեանը, Արշակ Թութիւնչեանը, Թադէոս Ղուկասեանը եւ ուրիշներ³⁷:

1871 թ. մայիսի 15-ին Կ. Պոլսում բացուեց Ռորերտ քոլեջը, որտեղ սովորում էին 17 տարբեր ազգերի եւ կրօնական 6 տարբեր դաւանանքների պատկանող պատանիներ: Այստեղ սովորողների գերակշիռ մասը հայ երիտասարդներ էին: Ուսուցման լեզուն անգլերէնն էր: Խորացուած ծրագրով ուսուցանւում էին հումանիտար եւ բնական գիտութիւններ, բարելաւ հիմքերի վերայ էր դրուած նաեւ հայոց լեզուի, գրականութեան եւ պատմութեան դասաւանդման առարկայական դրուածքը: Ռորերտ քոլեջը իր յարմարաւէտութեամբ եւ համալիր շինութիւններով, աշխատանոցներով, արհեստանոցներով, ուսումնադիտական ժամանակակից գործիքներով, առաջադէմ յայտագիր-ծրագրերով եւ ուսուցչական բարձրորակ կազմով այդ շրջանում բոլոր օտար վար-

³⁶ Ե. ՄԵԼԻՔԵԱՆ, *նշ. աշխ.*, էջ 32:

³⁷ Նոյն տեղում, էջ 31:

ժարանների մէջ համարում էր կրթական առաջնակարգ հաստատութիւն³⁸ :

1876 թուականին Կ. Պոլսի Սկիւտար թաղամասում բացուեց ամերիկեան «Հոմ Սքուլ» իգական վարժարանը, որտեղ սովորում էին նաեւ մեծ թուով հայ աղջիկներ:

Նմանատիպ դպրոցներ բացուեցին Կիլիկիայում, նաեւ արեւմտահայ գաւառներում՝ Մուշում, Վասպուրականում, Պարտիզավում, Մարգուանում, Այնթապում եւ այլուր³⁹ :

Իրրեւ բարեկարգ դպրոց՝ աչքի էր ընկնում Այնթապի միսիոներական դպրոցը: Այստեղ ուսուցիչների մեծ մասը հայեր էին, որոնց շարքում իր մեղուաջան գործունէութեամբ առանձնանում էր Ալեքսան Պէգճեանը: Նա երկար տարիներ դասաւանդել է բնական գիտութիւններ, տարրաբանութիւն, հանքաբանութիւն, բազմաթիւ դասագրքերի եւ մեթոդական ձեռնարկների հեղինակ է⁴⁰ :

1860 թուականին միսիա Փրաքթրի ջանքերով Այնթապում բացուեց աղջիկների բարձրագոյն վարժարան, իսկ 1886-ին կառուցուեց դպրոցի նոր շէնք՝ գիշերօթիկ բաժանմունքով: Վարժարանը պատրաստում էր ուսուցիչներ, կին քարոզիչներ, երիցուհիներ: Վարժարանի ընթացաւարտներն իրենց կրթութիւնը շարունակում էին Մարաշի իգական քոլէջում: 1913-1914 թթ. դպրոցական շրջանում Այնթապի վարժարանն ունէր 240 աշակերտուհի, որոնցից 60-ը՝ գիշերօթիկում:

Միսիոներների կրթական գործունէութիւնը Այնթապում սկսուել էր դեռեւս ԺԹ. դարի 50-ականներին, իսկ այդ գործում իր եռանդուն մասնակցութիւնն է ունեցել նշանաւոր աստուածաբան Շնայգերը, ում ջանքերով 1854 թուականին Այնթապում հիմնադրուեց Աստուածաբանական դպրոց, որը 1864-ին վերածուեց ճեմարանի եւ տեղափոխուեց Մարաշ: Այն ունէր 60 սան:

1874 թուականին Ալեքսան Պէգճեանի եւ Թրոպրիդի ջանքերով Այնթապում բացուեց Կեդրոնական քոլէջ, որն ունէր բըժըշկական դասընթաց եւ հիւանդանոց, նրան կից գործում էր նաեւ երկրորդական վարժարան, որի տնօրէն նշանակուեց Ալեք-

³⁸ Լ. ՉՈՐՄԻՍԵԱՆ, *նշ. աշխ.*, էջ 510-511:

³⁹ Տե՛ս «Հայկական հարց», Հանրադիտարան, Երեւան, 1996, էջ 333:

⁴⁰ Լ. ՉՈՐՄԻՍԵԱՆ, *նշ. աշխ.*, էջ 515:

սան Պէգճեանը: Ուսուցումը տարւում էր թուրքերէնով, դասադրքերը հիմնականում անգլերէն եւ թուրքերէն էին: Դպրոցն ունէր հարուստ գրադարան (1500 կտոր հայերէն գիրք), տպարան, կազմատուն եւ այլ կառույցներ:

Հայ աշակերտները դպրոցում հիմնել էին «Երիտասարդ բրիստոնեաների» եւ «Հայախօսաց» ընկերութիւններ, իսկ շրջանաւարտները ստեղծել էին սպորտային եւ մշակութային կազմակերպութիւններ: Ուսուցիչների մեծ մասը հայեր էին, որոնց մէջ իրենց մասնագիտական պատրաստութեամբ եւ բարձր գիտելիքներով աչքի էին ընկնում Ա. Պէգճեանը, Ա. Լեւոնեանը, պրոֆ. Գրիգորեանը, Զ. Պէգճեանը, Մ. Փափախթեանը, Վ. Քիրքեանը եւ ուրիշներ:

1886 թուականին Մարգուանում հիմնադրուեց Անատոլիա քոլէջը, որտեղ սովորել են տարբեր ազգերի 550 երեխայ: Իր եռանդուն գործունէութեամբ աչքի է ընկել պրոֆ. Թումանեանը: Հետագայում յեղափոխականի պիտակով նա բանտարկուել ու դատապարտուել է կախաղանի, սակայն, արժանանալով կալեւրական ներման, արտաքսուել է Երկրից⁴¹: Կառավարական շրջաններում քոլէջը քաղաքական նկատառումներով համարուել է «դաւադրութեան կեդրոն»: Անատոլիայի քոլէջը գործել է Այնթապի եւ Խարբերդի քոլէջների կրթական ծրագրերով: Ուսուցումը տարւել է անգլերէն եւ թուրքերէն:

Այդ շրջանում Մարգուանում գործել են նաեւ Ամերիկեան իգական բարձրագոյն վարժարան, խուլ ու համբերի գիշերօթիկ դպրոց, Աստուածաբանական ճեմարան, որբանոցներ, արհեստանոցներ, հիւանդանոց ու դեղատուն: Այստեղ հիմնականում դալիս էին սովորելու Ամասիայից, Թոգաթից, Կեսարիայից, Արարկիրից եւ այլ վայրերից հայ երեխաներ, որոնք ստանում էին կանոնաւոր կրթութիւն եւ անցնում ուսուցչական աշխատանքի եւ հոգեւոր ծառայութեան:

Եթէ փորձենք ներկայացնել ամերիկեան միսիոներական դպրոցների զարգացման ընթացքը ըստ ժամանակագրութեան, ապա կ'ունենանք այսպիսի վիճակագրութիւն. 1863-ին Կ. Պոլսում հիմնուել է Ռոբերտ քոլէջը, 1867-ին՝ Բէյրութի քոլէջը, 1874-ին՝ Այնթապի քոլէջը, 1878-ին՝ Խարբերդի Եփրատ քոլէջը, 1887-ին՝ Մարգուանի Անատոլիա քոլէջը, 1908-ին՝ Սեբաստիայի քոլէջը:

⁴¹ Նոյն տեղում, էջ 516:

Բերումած վիճակագրությունը մէկ անգամ եւս փաստում է այն մասին, որ ամերիկեան միսիոներները ԺԹ՝ դարի երկրորդ կէսին եւ ի. դարի սկզբներին Արեւմտեան Հայաստանի նահանգներում եւ Թուրքիայի հայաշատ քաղաքներում ծաւալել են ինչպէս քաղաքական, այնպէս էլ դաւանարական եւ լուսաւորական-գաղութարարական լայն գործունէութիւն: Նրանք դպրոցներ են բացել նաեւ Պարտիզակում, Ատարազարում, Նիկոմիդիայում, Պրուսայում եւ այլուր: Ուշադրութեան արժանի է յատկապէս Պարտիզակի բարձրագոյն վարժարանը, որի տնօրինությունը երկար տարիներ վարել է դոկտոր Զեմպլըսը: Նա իր շուրջն էր հաւաքել հայ ուսուցիչների հեղինակաւոր մի խումբ, որոնց մէջ աչքի են ընկել Արմենակ Տէր-Յակոբեանը, Տէր-Ստեփանեանը, Գասպարեանը, Եագուպեանը, Մակարեանը եւ շատ ուրիշներ: Այստեղ գործել է նաեւ աղջիկների վարժարան, որը հետագայում տեղափոխուել է Ատարազար եւ վերանուանուել է «Հայուհեաց վարժարան»: Այն շուտով դարձել է տնտեսական եւ կրթական անկախ հաստատութիւն⁴²:

«Հայուհեաց վարժարան»-ը բացուել է 1885 թ. սեպտեմբերի 1-ին Ատարազարի Աւետարանական եկեղեցու առաջնորդ Ալեքսանդր Հ. Ծեծիգեանի նախաձեռնությամբ⁴³ եւ Ամերիկեան պորտի բարոյական եւ նիւթական աջակցութեամբ: Վարժարանի տնօրինությունը իրրեւ ներքին տեսչուհի եւ գլխաւոր վարժուհի հրաւիրեց Պարտիզակի ամերիկեան իգական վարժարանի տեսչուհի Լորա Ֆարնմիւին, որի խնդրանքով էլ Պարտիզակի ամերիկեան իգական վարժարանն իր վարժուհիներով եւ գոյքով փոխադրուեց Ատարազար եւ այնուհետ վերանուանուեց «Հայուհեաց վարժարան»:

Ա. Ծեծիգեանի հաւաքած նպաստներով այստեղ կառուցուեց վարժարանի նոր շէնք, որը կոչուեց իր անունով՝ «Alexander Hall»: Վարժարանի նպատակը եւ ուղղությունը ի սկզբանէ եղել է. «Հայ աղջիկներու տալ, դիւրամատչելի պայմաններով միջնակարգ դաստիարակութիւն մը հիմնուած բարոյական առողջ

⁴² Տե՛ս «Վոչմակ», Նիւ Եորք, 1911, մայիս 20, թիւ 20.

⁴³ Վարժարանի Ատարազար փոխադրուելու եւ այնտեղ հաստատուելու գործում մեծ է Ա. Ծեծիգեանի դերը: Վարժարանի հիմնադրման պահից մինչեւ իր մահը (1893 թ.) թէ՛ որպէս խնամակալ, թէ՛ որպէս տնօրէն եւ ուսուցիչ մեծ եւանդով եւ անձուիրարար աշխատել է վարժարանի բարգաւաճման համար:

սկըզբունքներու վրայ եւ ասպէս յարմար՝ զարգացած եւ բարեկիրթ տանտիրիկներ եւ դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստել»⁴⁴:

Միս Լորա Ֆարնըմը եղել է «Հայուհեաց»-ի հոգին: Երեք տասնամեակից աւելի նա մեծ նուիրումով աշխատել է վարժարանի զարգացման եւ առաջադիմութեան համար:

«Հայուհեաց»-ը ունէր.

1) Նախապատրաստական բաժին՝ 3 տարուայ դասընթացով, որի ծրագիրը համապատասխան էր նախակրթարանի ծրագրին: Այստեղ դասաւանդուել է հայերէն, անգլերէն եւ նախնական գիտութիւններ: 1910-1911 թթ. դպրոցական շրջանում նախապատրաստական բաժինն ունէր 118 աշակերտուհի:

2) Վարժարանական դասընթաց՝ 4 տարուայ ուսումնառութեամբ, դասաւանդուել է հայերէն, օսմաներէն, անգլերէն⁴⁵, ֆրանսերէն, բնագիտական առարկաներ, գրականութիւն, հայ մատենագիտութիւն եւ պատմութիւն, տնարարութեան գործնական դասեր, կար ու ձեւ, երաժշտութիւն եւ այլն: 1910-1911 թթ. դպրոցական շրջանում վարժարանական դասընթացն ունէր 116 աշակերտուհի⁴⁶:

3) Վարժուհիոց՝ 1 տարուայ դասընթացով: Այն բացուել է 1909-1910 թթ. դպրոցական շրջանում: Վարժուհիոցի տեսչուհին միս Մ. Կայլն էր: 1910 թիւականին վարժուհիոցը տուել է իր առաջին եօթ աւարտողները⁴⁷:

1885-1910 թթ. ընթացքում «Հայուհեաց»-ը տուել է 215 ընթացաւարտ, որոնցից շատերը համալրել են հայ ուսուցչութեան շարքերը եւ մեծապէս նպաստել են անգլային դաստիարակութեան գործին: «Կոչնակ»-ը, անդրադառնալով «Հայուհեաց»-ի 25-ամեայ գործունէութեանը, սիրով արձանագրում է. «Հայուհեաց վարժարանը օրէ օր յառաջադիմելու նամբուն մէջն է: Այս տարի աշակերտուհիներուն ամբողջ թիւն է 234, որոնց 112-ը գիշերօթիկ են եւ 122-ը ցերեկուայ, թիւ մը որ երբեք իր նախնի-

⁴⁴ «Կոչնակ», Նիւ Եորք, 1911, մայիս 20, թիւ 20, էջ 492:

⁴⁵ Օտար լեզուների մէջ հիմնականը անգլերէնն էր, հոգ էր տարւում, որպէսզի իւրաքանչիւր աշակերտուհի վարժուէր յատկապէս իւսակցական անգլերէնին:

⁴⁶ Նոյն տեղում:

⁴⁷ Նոյն տեղում:

թացը ունեցած չէ: ...Վարժարանն այս տարի կու տայ 28 շըր-
ջանաւարտ: Վարժարանի տարեթոշակն է 14 օսմ. ոսկի»⁴⁸:

1859 թուականին Խարբերդում բացուեց Աստուածարանա-
կան վարժարան, որն ունէր 3 տարուայ դասընթաց: 1878-ից վար-
ժարանը գործել է ամերիկեան քոլէջի ծրագրով եւ ստացել է
«Արմենիա» անուանումը: Այդ շրջանում «Արմենիան» ունէր 34
աշակերտ⁴⁹: 1885-ին կառուցուեց վարժարանի նոր շէնքը՝ իր ըն-
դարձակ համալիր շինութիւններով: Երեք տարի անց օսմանեան
կառավարութեան յատուկ հրահանգով «Արմենիան» վերանուա-
նուեց «Եփրատքոլէջ»-ի⁵⁰:

«Եփրատ քոլէջ»-ը 18 շէնքերից բաղկացած համալիր շի-
նութիւն էր՝ տղաների եւ աղջիկների առանձին բաժանմունքնե-
րով, դպրոցական առողջապահութեան ժամանակակից բոլոր յար-
մարութիւններով, ուսուցիչների համար յարմարուէտ բնակարան-
ներով, արուեստանոց-արհեստանոցներով, մարզադահլիճներով, գի-
տահետազոտական աշխատանոցներով, գրադարան-թանգարան-մա-
տենադարանով եւ այլ կառույցներով: Գրադարանն ունէր 7500 կը-
տոր գիրք (200-ը՝ հայերէն, 400-ը՝ թուրքերէն, իսկ մնացած 5100-ը՝
անգլերէն լեզուներով), ձեռագրեր, պարբերաթերթեր: 1889-ին
հիմնուեց նաեւ տպարան, որտեղ տպագրուել են հայերէն եւ անգ-
լերէն դասագրքեր: Այստեղ պրոֆ. Կ. Սողիկեանի խմբագրութեամբ
հրատարակուեց «Եփրատ» պարբերականը⁵¹:

Քոլէջի հիմնադիրը եւ առաջին տնօրէնը լինելու պատիւը
վերապահուած էր գոկտոր Հուրիւրին, որի 15 տարուայ ջանա-
դիր գործունէութեան շնորհիւ դպրոցը դրուեց հաստատուն հիմ-
քերի վրայ: 1895-ին դպրոցի տնօրինութիւնը ստանձնեց գոկտոր
Գեյթսը:

Դպրոցի նպատակը եւ ուղղութիւնը կանոնադրութեան մէջ
սահմանուած է այսպէս. «Այս Գոլէմին գլխաւոր նպատակն է
Քրիստոնեայ ուսումնական առաջնորդներ պատրաստել, եւ

⁴⁸ «Կոչնակ», 1911, մայիս 20, թիւ 20, էջ 493:

⁴⁹ «Արմենիան» իր առաջին շրջանաւարտները տուել է 1979-1880 ուսումնա-
կան տարում:

⁵⁰ Քանի որ թուրքական կառավարութիւնը Արմենիա բառի վերաբերեալ ունէր
խիստ առարկութիւններ, հետեւաբար՝ 1888-ին վարժարանը վերանուանուեց
«Եփրատ» քոլէջի:

⁵¹ «Կոչնակ», 1911, մայիս 27, թիւ 21, էջ 514:

Քրիստոսի եկեղեցիին ապահովել այն վարող ազդեցութիւնը, որ զանազան ազգի վերաբերող համայնեմբերու քրիստոնէական քաղաքակրթութեան մը օրհնութիւնները տալով պիտի արդիւնաւորէր»⁵²։ Վարժարանի նպատակի այսպիսի սահմանումն առաջին հայեացքից թուում է՝ զուտ կրօնական խնդիրներ է հետապնդում, սակայն, երբ խորամուխ ենք լինում նրա ուսման բովանդակութեան մէջ, ակնյայտ է դառնում, որ դա միայն արտաքին շղարշ է, քանի որ դպրոցում լաւ հիմքերի վրայ է եղել ինչպէս հայազրիտական եւ պատմազրիտական առարկաների, այնպէս էլ բընագիտական առարկաների եւ ճշգրիտ գիտութիւնների դասաւանդման դրուածքը։ Քոլէջը տուել է գրողների, մտաւորականների, արուեստագէտների փառահեղ սերունդ՝ հայ անուանի բանաստեղծներ Մկրտիչ եւ Ռուբէն Որբերեաններ, քանդակագործ Նշան Թութունճեան (Նշանխում), բժիշկ Հարէթ Փիլիպոսեան, երաժշտագէտ Սամուէլ խաչատուրեան, բանաստեղծներ Ռուբէն Զարգարեան, Գարեգին Պեչկիւթուրեան), թատերագէտ Տօնապետ Լիւլէճեան, պրոֆեսոր Յովհաննէս Պուշիգանեան եւ շատ ուրիշներ⁵³։

Ուսուցչական մարմինը բաղկացած էր 7 պրոֆեսորներից եւ 17 ուսուցիչներից։ Օսմաներէն եւ ընդհանուր պատմութիւն էր դասաւանդում պրոֆ. Ն. Թենեքեճեանը, աստղագիտութեան, բընագիտութեան, երկրաչափութեան եւ ուսողութեան փայլուն մասնագէտ էր պրոֆ. Ս. Նահիկեանը։ Քոլէջում բարձր մակարդակով աւանդւում էր հոգեբանութիւն, մանկավարժութիւն, փիլիսոփայութեան պատմութիւն, տրամաբանութիւն եւ քաղաքական տրնտեսագիտութիւն առարկաները։ Այս առարկաների դասաւանդումը վստահուած էր համայնագէտ գիտնական պրոֆ. Հ. Պուճիգեանին։ Հայոց լեզուի, գրականութեան եւ տարրաբանութեան դասախօսն էր պրոֆ. Կ. Սողիկեանը, երկրաբանութիւն, թուրքերէն եւ աշխարհագրութիւն էր դասաւանդում պրոֆեսոր Մ. Որբերեանը, Ֆրանսերէնի ուսուցիչը պրոֆ. Մարգոտն էր, իսկ երաժշտութիւն (տեսական ու գործնական) դասաւանդում էր պրոֆեսոր Ս. խաչատուրեանը։ Ուսման բովանդակութեան մէջ կարեւոր տեղ են ունեցել նաեւ կենդանաբանութիւն, բուսաբանութիւն եւ կենսաբանութիւն առարկաները, որոնք դասաւանդում էր այդ

⁵² Նոյն տեղում, , էջ 513։

⁵³ Տե՛ս «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1902, թիւ 1720։

առարկաների դժով եւրոպական համալսարաններում բարձրագոյն կրթութիւն ստացած Տ. Լիւլէճեանը⁵⁴:

Քոլէջի շրջանաւարտներն ընդհանրապէս զբաղուել են ուսուցչութեամբ, վաճառականութեամբ, քարոզչութեամբ, բժշկութեամբ, փաստաբանութեամբ, երկրագործութեամբ եւ այլ մասնագիտութիւններով:

Քոլէջի կրթական ծրագիրը կազմուած էր չորսամեայ ուսուցման համար եւ ունէր հետեւեալ կառուցուածքը.

Ա. տարի՝ Կրտսերք (Freshman). հայերէն, երկրաչափութիւն, կենդանաբանութիւն, անգլերէն, հին ազգերի պատմութիւն, օսմանեան գրականութիւն, Փրանսերէն ընթերցանութիւն եւ քերականութիւն:

Բ. տարի՝ Երէցք (Sophomore). հայերէն մատենադարան, բընախօսութիւն, եռանկիւնաչափութիւն, թուրքերէն քաղաքացիական ծանօթութիւն, միջին դարերի պատմութիւն, բնագիտութիւն, անգլերէն քերականութիւն, Փրանսերէն ընթերցանութիւն:

Գ. տարի՝ Երիցագոյնք (Junior). հայերէն գրագիտութիւն, քիմիաբանութիւն, երկրաբանութիւն, նոր դարի պատմութիւն, հոգեբանութիւն, մանկավարժութիւն, քաղաքական տնտեսագիտութիւն, անգլիական գրականութիւն, տրամաբանութիւն, օսմանեան գրականութիւն, Փրանսերէն լեզու:

Դ. տարի՝ Աւագ (Senior). աստղագիտութիւն, ԺԹ. դարի պատմութիւն, բարոյագիտութիւն, քրիստոնէութեան ապացոյցք, փիլիսոփայութեան պատմութիւն, թուրքերէն օրէնք, անգլիական գրականութիւն, Փրանսերէն քերականութիւն:

Ամերիկեան միսիոներները քարոզչական եւ լուսաւորչական գործունէութիւն են ծաւալել նաեւ Տարսոնում: Այստեղ՝ 1888 թուականին, Յարութիւն Ճենանեանի ջանքերով բացուեց Տարսոնի քոլէջը՝ 16 աշակերտներով: Հետագայում քոլէջին կից բացուեց նաեւ նախակրթարան: Հ. Ճենանեանի տնօրինութեան վեց տարիների ընթացքում սովորողների թիւը հասաւ 94-ի (հիմնականում հայ՝ 54 եւ յոյն՝ 40): Ուսուցչական մարմինը հայերից էր կազմուած: Իրենց մասնագիտական պատրաստուածութեամբ եւ ուսուցչական բեղուն գործունէութեամբ աչքի էին ընկնում Հայկազեանը, Մինասեանը, Քիւթեանը, Պոհճալեանը, Չաքրեանը

⁵⁴ «Վոչմակ», 1911, մայիս 27, թիւ 21, էջ 513.

եւ ուրիշներ: 1913-1914 թթ. դպրոցական շրջանում նախակրթարանում սովորող երեխաների թիւը հասաւ 122-ի, իսկ քոլէջում՝ 88-ի:

Յարութիւն Ճենանեանը 1892-1893 թթ. ուսումնական տարում Գոնիայի դպրոցը վերածեց իր անունը կրող քոլէջի, որն ունէր 80 աշակերտ՝ 30-ը՝ գիշերօթիկ: 1895 թ. Գոնիայի քոլէջի տնօրէն նշանակուեց դոկտոր Արմենակ Հայկազեանը: Նրա տնօրինութեան 20 տարիների (1895-1915 թթ.) ընթացքում քոլէջը զգալի յաջողութիւնների հասաւ:

Այսպիսի բարեկարգ վարժարաններ ու քոլէջներ են ստեղծուել նաեւ Սվազում, Ամասիայում, Արարկիրում, Կիլիկիայի Հաճըն քաղաքում, Ուրֆայում, Մալաթիայում, Սեբաստիայում, Տրապիզոնում եւ այլուր:

Յիշատակութեան արժանի է 1894 թ. Հաճընում հիմնադրուած Ակադեմիան:

Ամերիկեան միսիոներների հետ մէկտեղ արեւմտահայ գաւառներում եւ քաղաքներում իրենց քարոզչութիւնն են ծաւալել նաեւ գերմանական միսիոներները, որոնց գործունէութիւնը յատկապէս աշխուժացաւ 1894-1896 թուականների հայկական զանգուածային ջարդերից յետոյ, երբ հարիւր հազարաւոր որբ եւ անապաստան մանուկներ ու ծերեր իրենց գոյութիւնը պահելու համար Փիզիկական, բարոյական եւ սոցիալական աջակցութեան կարիք ունէին:

Այսպէս, եթէ արեւմտեան միսիոներների հիմնադրած նախակրթարաններում կրթութիւն ստացած հայերից ոմանք դարձել էին կաթոլիկներ եւ աւետարանչական քարոզիչներ, ապա պէտք է նկատի ունենալ, որ նրանցից շատերն էլ դարձել էին ուսուցիչներ, բժիշկներ, ճարտարագէտներ ու արուեստագէտներ, գրողներ ու բանաստեղծներ, փաստաբաններ ու իրաւագէտներ, ուլքեր ոչ միայն խթանել են ազգային մշակոյթի ու գիտութեան զարգացման գործընթացը, այլեւ նոր թափ են հաղորդել դպրոցական գործին, լուսաւորութեանն ու կրթութեանը ինչպէս բուն Արեւմտեան Հայաստանում, այնպէս էլ Թուրքիայի հայաշատ քաղաքներում եւ Սփիւռքում: Հետեւաբար՝ կարող ենք փաստել, որ եթէ այնքան էլ չօշափելի չէ նրանց կրօնական քարոզչութեան գործնական արդիւնքը, ապա բաւականաչափ մեծ է կաթոլիկ եւ բողոքական կրօնաւորներից նրանց ստացած եւ իրենց վր-

րայ կրած հոգու եւ մտքի դաստիարակութեան խոր ազդեցութիւնը:

Ինչ խօսք, սա վերջնական եզրայանգում չէ, այլ ընդամենը տեսակէտ այս հիմնահարցի վերաբերեալ, որն աւելի խոր եւ հանգամանալից ուսումնասիրութիւնների եւ լրացուցիչ նիւթերի առկայութեան զէպքում կը յանգեցնի նոր մօտեցումների ու պարզաբանումների:

Օտար վարժարանների միջոցով արեւմտեան մշակոյթն ու քաղաքակրթութիւնը մուտք գործեց արեւմտահայ իրականութիւն, նրանց կանոնաւոր կրթական ու մանկավարժական առաջադէմ ուղղութիւնների ազդեցութեան շնորհիւ նկատելիօրէն փոխուեց նաեւ հայ դպրոցը, որը ստանալով նոր շունչ ու ոգի, առաջին հերթին իր վրայից զէն նետեց միջնադարեան խաւարը, ազատագրուեց հոգու եւ մտքի կուրուլթիւնից շնորհիւ այն գիտութիւնների ու մեթոդների, որոնք աւանդում էին այդ դըպրոցներում: Ուրեմն՝ սովորողների բարոյահոգեբանական կերտումաժքի վրայ գիտութիւնների ու արուեստների ուսուցումն աւելի մեծ դեր է կատարել, քան կրօնաբարոյական դաստիարակութիւնն ու դաւանաբանական քարոզչութիւնը:

Այսինքն՝ կրօնադաւանաբանական գաղափարաբանութիւնից առաւել, հայ մանուկներն ու պատանիներն օտար վարժարաններում կաթոլիկ եւ բողոքական միսիոներներից գիտութիւններ ու արուեստներ են սովորել: Այս հարցի առթիւ բաւականաչափ հետաքրքիր եւ արդարամիտ դատողութիւններ ունի Մկրտիչ Խըրրիմեանը. «...Փողոցներու մէջ անտէր մնացած որբեր իրաւունք ունին ժողովել այդ մարդասէրներ. երբ մեր մարդասէրներ պակասում եւ կարող չեն այդչափ ահագին գոհողութիւն անել: Վերցուցէ՛ք այժմ կրօնի խնդիրներ, զի այժմ ոգեպահիկ հացի խնդիր է յաղթանակող»⁵⁵:

Ամերիկեան եւ կաթոլիկ միսիոներների գործունէութիւնը հայ մտաւորականները գնահատել են ոչ միանշանակօրէն: Գնահատուել են նաեւ զրական կողմերը, որ ի յայտ եկան յատկապէս 1890-ական թուականներին եւ Մեծ Եղեռնի շրջանում՝ մինչեւ 1923 թուականը, երբ ամերիկեան եւ եւրոպական բազմաթիւ դը-

55

ԳԱԹ, Խրիմեանի ֆոնդ, Գ. 26.

Թասէր, ազնիւ միսիոներներ անձնուիրաբար օգնեցին երիտթուրքական քաղաքականութեան զոհ դարձած տարազիր հայութեանը⁵⁶ :

Մատթէոս Մամուրեանը երախտագիտութեան բարձր զգացումով է գնահատել ամերիկուհի հայասէր օրիորդներ Գլիոնի, Ֆրայզերի, տիկին Նալլընի եւ այլոց գործունէութիւնը⁵⁷ :

Այն, որ գերտէրութիւնները ամերիկեան եւ կաթոլիկ միսիոներներին գործունէութիւնը Օսմանեան Թուրքիայում օգտագործել են երկդիմի նպատակներով, իսկ Թուրքիան իր հերթին նենգամտօրէն այն ծառայեցրել է որպէս հայերի մէջ կրօնական երկպառակութիւն առաջացնելու եւ ազգային-ազատագրական պայքարը ճնշելու հզօր միջոց, կասկածից վեր է: Այսուհանդերձ չը պէտք է անտեսել, որ նրանցից շատերը (Մ. Եակոբսէնը, Կ. Եփփէն, Կ. Փիթըրսոնը, Ա. Եոհաննսնը, Զ. Հորդը, «Կոչնակ»-ի խմբագիր, «Աւետարեք»-ի տնօրէն Հերպեր Մ. Ալէնը եւ շատ ուրիշներ)⁵⁸ փաստօրէն մոռանալով իրենց կրօնական եւ քաղաքական առաքելութիւնը, խորապէս ուսումնասիրել են հայ ժողովրդի լեզուն ու մշակոյթը, ամբողջովին նուիրուել են զպրոցաշինութեան եւ հայերի մէջ լուսաւորութիւն տարածելու գործին՝ քննադատելով նաեւ օսմանեան բռնապետութեան խստակարգն ու հայաջինջ քաղաքականութիւնը: Բացի դրանից, նրանցից շատերի (Եո. Լեփսիւս, Լ. Աբբոթ, Է. Լորինսոն, Է. Բլիս եւ ուրիշներ)⁵⁹ հաղորդագրութիւնները, կազմած տեղեկագրերն ու նօթագրութիւնները Թուրքական կառավարող շրջանների հայատեաց քաղաքականութեան վերաբերեալ, կարեւոր վաւերագրեր են ինչ-

⁵⁶ Տե՛ս Ա. Գրիգորեան, Վ. Բրոնսեան, Զմիւռնահայ կրթական-մշակութային կեանքի պատմութեան ուրուագծեր (19-րդ դարի սկզբից մինչեւ 1922 թ.) Ե., 2007, էջ 57-58:

⁵⁷ Տե՛ս «Արեւելեան մամուլ», Զմիւռնիա, 1897, էջ 468-471, 499-502, 1898, 558-560, տե՛ս նաեւ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ, Պատմութիւն Եւրոպիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 833-834, Մ. Գ. ՃԻՋՄԵՃԵԱՆ, Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնո, 1955, էջ 109-110, Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ, Մարդիկ եւ իրք, Կ. Պոլիս, 1885, էջ 222, Գր. ՆԱԶԻԿԵԱՆ, Արեւմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Ե., 1969, էջ 158-180, K. Sarafian, "History of education in Armenia", California, 1930, էջ 163-165, ՀՄՀ, հատ. 7, Ե., 1981, էջ 608-609 եւ այլն:

⁵⁸ Տե՛ս Հայկական հարց, Հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 334:

⁵⁹ Նոյն տեղում:

պէս հայկական հարցի, այնպէս էլ հայերի ցեղասպանութեան լուսարանման համար:

Անկախ կրօնական ներմիտ մտայնութիւնից եւ դաւանարանական կոյր մոլեռանդութիւնից՝ պէտք է խոստովանել, որ օտար վարժարանները հայ մանուկների համար թէպէտ ոչ միակ, սակայն ընդհանուր առմամբ եղել են զարգացման ու առաջադիմութեան հասնելու քիչ թէ՛ շատ հնարաւոր եւ մատչելի միջոցներ թէ՛ իրենց ստացած դաստիարակութեան եւ կրթութեան, թէ՛ հայ դպրոցի մէջ նորի եւ առաջաւորի ներդրման, եւրոպականը ազգային հետ չափաբերելու տեսակէտից:

Թերեւս սա նկատի ունենալով է, որ «Բիւզանդիոն»-ը դարավերջի իր համարներից մէկում բարձրացրել է ընտանիքի, մօր ու մանկան եւ ընտանեկան կենցաղի առողջապահութեան խնդիրներ՝ համեմատական գուզադրումներ անելով հայ առաքելական եւ բողոքական եկեղեցիների այս հարցերի վերաբերեալ ունեցած պատկերացումների միջեւ. «Քանի մը տարի առաջ խմբագիր մը կ'առաջարկէր,- գրում է Բիւզանդիոնը,- որ մեր եկեղեցիին քեմէն ժողովրդին պարզ առողջաբանական բարոյներ տրւին, բայց մեր եկեղեցականներն ատանկ բան մը ո'չ կը խօսին եւ ո'չ ալ խօսելիք ունին»: Մինչդեռ հայ բողոքական եկեղեցին կարեւորում էր առողջաբանական գրոյցների, երեխաների խնամքի եւ այսօրինակ բազմաթիւ այլ հարցերի վերաբերեալ ծնողներին արժէքաւոր խորհուրդներ տալու անհրաժեշտութիւնը, թէկուզեւ «Տէրունական աղօթքի» հետ միանոյլ. «...Պատուելին,- շարունակում է Բիւզանդիոնը,- «Տիրոջը խօսքին» հետ առողջաբանական խրատներ կը խառնէ... հայ բողոքական կիմն - իր լսածէն եւ կարդացածէն օգտուելով - ուսումնապէս աւելի լաւ գիտէ մօր մը պարտականութիւնը, զուակ խնամելու օրէնքներն եւ այլն»⁶⁰:

Ի զէպ, Բիւզանդիոնի ծրագրային նախագծերից մէկը «Կանանց լսարաններ» բաժինն էր, որտեղ պարբերաբար տպագրուել են կանանց դաստիարակութեան, կնոջ սեռական առողջապահութեան եւ հիգիենայի վերաբերեալ արժէքաւոր յօդուածներ⁶¹:

⁶⁰ «Բիւզանդիոն», Գ. Պոլիս, 1898 նոյեմբեր, թիւ 631.

⁶¹ Տե՛ս նոյն տեղում, թիւ 631, 661, 669, 671:

Սրանով հանդերձ՝ ԺԹ. դարի երկրորդ կէսի հայ առաջադէմ մտաւորականները եւ հայ ժողովրդի ճակատագրով մտահոգուած ժողովրդավարական ուժերը, ազգի տոհմիկ նկարագիրը պահպանելու անկեղծ մղումով նպատակադրուած, շարունակել են իրենց անհաճանջ պայքարը արեւմտեան միախոնքերի դէմ՝ կեանքի կոչելով մեր Մեծ նախնիների կրթական աւանդոյթներն ու բարքերը: Կարեւորելով ազգային նկարագրի պահպանման եւ էթնիկական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը՝ հայ առաջադէմ միտքը խիստ կասկածի տակ էր առնում օտար, այլադաւան կրթութեան տէր մարդկանց աշխարհաքաղաքացիական պատկանելութիւնը: Այս մասին «Մասիս»-ը համոզուած գրում է. «Անոնք գիտական հարեւանցի տեղեկութիւններով միայն կը մտնեն հայ ընկերութեան մէջ, ուր պիտի ապրին, առանց ճանաչելու իրենց տոհմին անցեալը, կեանքը եւ շատ անգամ լեզուն ալ...»⁶²:

Հարցը սրանով չի սահմանափակուել, քանի որ արեւմտեան միախոնքերի ջանքերով բացուող դպրոցները, որքան էլ դրանք լինէին անցանկալի, այնուամենայնիւ, դրանց ցանցի ընդլայնմանը առաջին հերթին նպաստել են թուրքական կառավարող շրջանները՝ հետամուտ լինելով իրենց շահադիտական նկատառումներին. նախ՝ գործել են հայ ժողովրդի միասնութիւնը խաթարելու եւ դաւանաբանական հակամարտութիւնները թէժացնելու նըպատակով, եւ երկրորդ, որն ամենակարեւորն էր, դպրոցական եւ կիսնաղային նպատակներով կառուցուած յարմարաւէտ շինութիւններն ու եւրոպական արդի ոճով համալիր շքեղ կառուցապատումները (կահ-կարասին, ուսումնականութեան հարուստ բազան, տնտեսութիւնը եւ այլն), ի վերջոյ, անցնելու էին թուրքերի ձեռքը՝ դառնալով հաստատուն կապիտալ:

Հետեւաբար՝ չի կարելի առանց քննադատութեան համաձայնել միակողմանի, երբեմն նաեւ գիտական հիմնաւորումներից զուրկ այն տեսակէտների ու կարծիքների հետ, որ իբր թէ ամերիկեան, ֆրանսիական, գերմանական կաթոլիկ եւ բողոքական միախոնքերի հիմնած կրթական հաստատութիւններն ընդհանրապէս ոչ մի լաւ բան չեն տուել, զրականապէս չեն նպաստել սերնդի դաստիարակութեան գործին, չեն խթանել հայ երիտասարդին՝ այս կամ այն մասնագիտութիւն ընտրելու գործում եւ դրա մէջ խորանալուն, չեն օժանդակել լեզուների իմացութեան, գիտական, մանկավարժական եւ թարգմանական գրականութեան

62

«Մասիս», 4. Պոլիս, 1898, թիւ 3:

ստեղծման եւ հայ իրականութեան մէջ արեւմտեան քաղաքակրթութեան տարածման գործին, թէեւ միսիոներական միարանութեան գործունէութեան բուն նպատակը եւ գործունէութեան ընդհանուր ուղղութեամբ թիւնը, ըստ էութեան, մերժում էր բուն ազգայինը եւ ազգային գաստիարակութիւնը:

Այս խնդրի շուրջ կան տարբեր մօտեցումներ, տեսակէտներ, կարծիքներ ու բնութագրումներ, սակայն դրա պատմագիտական խոր վերլուծութիւնը եւ գիտական հայեցաբանական արժեւորումը առայսօր չի կատարուել, հետեւապէս՝ չի տրուել նաեւ այս հարցի ճշգրիտ եւ անկողմնակալ, անաչառ գնահատականը, ըստ ամենայնի չի պարզարանուել նրա դերն ու պատմական առաքելութիւնը ինչպէս բացասական, այնպէս էլ դրական արժեւորման բնութագրումների տեսանկիւնով:

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

The Missionaries and Their Educational and Enlightenment Activities in Western Armenia and Armenian-populated Areas of Turkey (1850-1920 A.D.)

SHOGHIK VOSKANIAN

(summary)

The general study that presents the second half of the 19th century and the first two decades of the 20th century of the Western Armenian schools and pedagogical thought will be incomplete if the elucidative-educational activity promoted by the Western Missionaries in Constantinople, Western Armenia and Armenian-populated areas of Turkey is ignored.

The importance of this issue is signified in the true fact that, next to tumbledown, dilapidated, miserable, poor and wretched school, are being built well-organized and splendid ones by the European missionary preachers, where considerable number of Armenian students received education with European values.

They chose Constantinople as the centre of the realization of their professed political planned ideas, because the selected society of the Western Armenian intellectuals were concentrated there. Taking advantage of such an opportunity of the insoluble social-economical state of people, they founded comfortable and well-managed schools in Constantinople, in the provinces of Western Armenia and in the Armenian-populated areas of Turkey as well. Stirring up heated arguments in the sphere of religion they succeeded to divide the Western Armenian Catholics and Protestant communities by endangering their further unanimity and concord.

At the beginning of the 19th century, the Western Armenians did not have any dormitory schools available, a fact that missionaries took into consideration immediately and built such schools to educate the young with Western values.

It is absolutely clear that the Turkish government was content with the fruitless and unavailing struggle and religious incompatible arguments among the missionaries and Armenians because such conditions gave him the advantage on two fronts; first, it was an opportunity on one hand to cajole and coax the Western Countries and on the other hand to deflect and distract the Armenian pioneering thoughts from social, political and national-emancipation movement and struggle.

With the help of foreign schools, Western Culture and civilization penetrated into Western Armenian reality and cultural life and hence by influencing the educational and pedagogical advanced directions, the Armenian school considerably became different by getting new spirit and courage, and therefore they threw off the yoke of medieval illiteracy, got rid of spiritual and mental blindness due to those sciences and methods being taught at those schools. So, on the basis of the moral-psychological image of the learners the study of sciences and arts played a more important and significant role than religious-

moral upbringing and faith advocacy. It means that besides religious ideology the Armenian children and juveniles learned sciences and arts in foreign schools from Catholic and Protestant missionaries. Consequently, it is not just and right to agree one-sidedly and unilaterally without criticism with such viewpoints and ideas which have no scientific basis that the educational institutions established by the American, French, German Catholic and Protestant missionaries showed no preference, did not contribute to the upbringing of the young generation, did not encourage the Armenian youth in the noble cause of the professional choices, did not contribute to the study of languages, to the creation of scientific, pedagogical and translation literature and to the spreading of the Western Civilization in the Armenian reality though the main purpose and general direction of the missionary congregation activity essentially refused the very national upbringing.

There are different approaches and interpretations to this issue but its exact historical analysis and scientific estimation have not been carried out yet, therefore the precise and impartial evaluation of this issue has not been given yet, neither the role of its historical mission, positive or negative.